«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում

Դաստիարակ՝ Արփինե Կոստանդյան

Մանկապարտեզ՝ «Ալավերդու համայնքի Օձունի մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 2
Գլուխ1 Մանկապարտեզի և ընտանիքի կապը որպես անհատական մոտեցման արդյունավետ իրականացման պայման գործում..... 4
Գլուխ 2 Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և
ընտանեկան դաստիարակության հարցում..... **Error! Bookmark not defined.**
2.1 Ընտանիքի հետ համագործակցության ձևերը..... 11
2.2 Ծնողները խմբասենյակում..... 13
2.3 Գործնական մաս «Աշնան տոնը մանկապարտեզում» 15
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 217
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 182

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ընտանեկան կյանքի գլխավոր իմաստն ու

նպատակը երեխաների դաստիրակությունն է:

Վասիլի Սուխոմլինսկի

Յուրաքանչյուր անհատի ճակատագիրը ձևավորվում է մանկուց: Երեխայի կրթադաստիարակչական գործում առաջնային դեր ունի ընտանիքը: Այն երեխայի սոցիալականացման առաջին օղակն է, որտեղ նա ճանաչում է ինքն իրեն և ձևավորվում որպես անհատ:

Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության մոդելի կենտրոնում երեխան է: Եվ ըստ նախադպրոցական կրթության ոլորտը կանոնակարգող նորմատիվ փաստաթղթերի պահանջների՝ դաստիարակը պետք է համագործակցի սաների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ:

Այս աշխատանքի արդիականությունը կայանում է նրանում, որ ընտանեկան դաստիարակության համակարգը փոփոխություն է կրում, փոխվում է ընտանիքի նկարագիրը և հետևաբար, արդիական է դառնում ընտանիք-մանկապարտեզ կապը: Այն կարող է ազդել մանկավարժական աշխատանքի արդյունավետության վրա՝ միասնական ուժերով երեխաներից արմատախիլ անել վատը և նրանց մեջ սերմանել դրականը:

Հետազոտության նպատակն է՝ հիմնավորել ծնող-մանկապարտեզ կապի արդյունավետությունը, առանձնահատկությունները, առավելությունները սանի կրթության, դաստիրակության և զարգացման գործում:

Նպատակից էլ բխում է խնդիրները՝

- ✓ որոշել մանկապարտեզի մանկավարժական կոլեկտիվի, ծնողի և սանի հետ համագործակցության կազմակերպման հիմնական ուղղությունները, բացահայտել և վերլուծել մանկավարժական կոլեկտիվի, սաների և ծնողների համագործակցության աստիճանը՝ դաստիարակչական խնդիրների արդյունավետ լուծման համար:
- ✓ ուսումնասիրել համապատասխան գրականություն և պարզել, թե որքանով է կարևոր մանկավարժական աշխատողի և ծնողի (նրանց օինանական ներկայացուցիչների) համագործակցությունը՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և դաստիարակության հարցում:

Հետազոտական աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլուխներից, գործնական մասից և եզրակացությունից: Առաջին գլխում անդրադարձել եմ **մանկապարտեզի և ընտանիքի կապին՝ որպես անհատական մոտեցման արդյունավետ իրականացման պայման:** Երկրորդ գլխում ներկայացված է

մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում:

Գլուխ1 Մանկապարտեզի և ընտանիքի կապը որպես անհատական մոտեցման արդյունավետ իրականացման պայման գործում

Երեխաների դաստիարակության գործընթացում անհատական մոտեցման հիմնախնդիրը միշտ էլ եղել է առաջադեմ մանկավարժության ուշադրության կենտրոնում: Ըստ Կոմենսկու՝ ուսուցման և դաստիարակության ողջ գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել երեխաների տարիքային և անհատական առանձնահատկությունները: Ռուս մանկավարժ Ուշինսկին մշակել է երեխաների նկատմամբ անհատական մոտեցման ընդարձակ մեթոդիկա: Մակարենկոն գտնում էր, որ մանկավարժական մի շարք խնդիրների իրականացման համար շատ կարևոր է անհատական մոտեցման սկզբունքը՝ հատկապես կոլեկտիվի ձևավորման գործում, աշխատանքում, խաղում և այլն[1, էջ337]: Նա իր ողջ պրակտիկ աշխատանքի ընթացքում ապացուցել է, որ միայն կոլեկտիվում երեխան կարող է ստանալ այնպիսի որակներ, ինչպիսին են հարգել ընկերոջ կարծիքը, նպատակաուղղվածություն, կամք, ազնվություն, մարդասիրական զգացումներ և այլն: Երեխային ուսումնասիրելիս ոչ միայն պետք է տեսնել արտաքինը, այն ինչ աչքի է ընկնում, այլ թափանցել երեխայի ներաշխարհը, հաշվի առնել նրա ցանկությունները: Երեխաների նկատմամբ անհատական մոտեցման հիմնախնդիրն իր մեծ արձագանքն է գտել Սուխոմլիսկու մանկավարժական հայացքներում: «Դաստիարակությունը նախ և առաջ

մարդաբանություն է: Առանց երեխային ճանաչելու՝ առանց իմանալու նրա մտավոր զարգացումը, մտածողությունը, հետաքրքրությունները, հրապուրանքները, ընդունակությունները, տվյալները, հակումները, չկա դաստիարակություն»: Երեխաների անհատական առանձնահատկությունների հաշվի առնելու ճանապարհը Սուխոմլինսկին համարում էր ընտանիքը, նրա մանկավարժական լուսավորությունը, մանկավարժական տարրական գիտելիքների առկայությունը: Երեխայի համար ընտանիքը համարվում է բնականաբար դաստիարակող միջավայր: Այն իր հետքն է թողնում երեխայի բնավորության և վարքի ձևավորման վրա: Ընտանիքում է ստանում աշխարհաճանաչման առաջին դասերը և ծանոթանում կյանքի տարրական կանոններին: Ստացած տվյալներն աստիճանաբար ընդարձակվում և բարդանում են այն չափով, ինչքանով զարգանում և աճում է երեխան: Երեխաների հետ աշխատող մանկավարժը պետք է ծանոթանա ընտանեկան դաստիարակության պայմաններին: Շատ ծնողներ չունենալով մանկավարժական կրթություն, ծանոթ չլինելով գիտական մանկավարժության այսօրվա նվաճումներին, լիարժեք չեն պատկերացնում անհատական մոտեցման անհրաժեշտության դերը: Անհատական մոտեցման արդյունավետ պայմաններից են համարվում մանկավարժների այցելություններն ընտանիք, որն աննպատակ չպետք է լինի: Առաջին այցելության ժամանակ դաստիարակը ծանոթանում է ծնողների և ընտանիքի մյուս անդամների հետ, ստանում է որոշակի պատկերացում ընտանեկան պայմանների և դաստիարակության մասին: Զրուցելով ծնողների հետ անհրաժեշտ է բացահայտել ծնող-երեխա փոխհարաբերությունը, պարզել երեխայի տեղն ընտանիքում: Մանկավարժը կարող է եզրակացնել, թե ընտանեկան պայմաններն ինչքանով են ազդում երեխայի անհատական առանձնահատկությունների ձևավորման վրա: Կարևոր է բացահայտել նաև, թե երեխան ինչով է զբաղվում տանը, ունի սիրելի զբաղմունք կամ խաղ: Այս հարցի պարզաբանումը խոսում է այն մասին, թե ծնողները ինչքանով են հաշվի առնում օգտակարը և վնասակարը երեխայի համար: Անհրաժեշտ փաստեր արձանագրելու համար երեխային պետք է ուսումնասիրել թե՛ ընտանիքում, թե՛ մանկապարտեզում: Այս աշխատանքը պետք է կատարել շատ զգուշորեն, քանի որ այն նուրբ հարց է: Սկզբում անհրաժեշտ է խոսել դրական որակների, նրանց կարողությունների, հետաքրքրությունների մասին: Այդ ժամանակ ծնողները կհասկանան, որ դաստիարակները ոչ թե մտածված շեշտում են թերությունները, այլ փորձում են այնպես անել, որ երեխաները դառնան ավելի լավը: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս ծնողների և դաստիարակների միջև ստեղծել վստահություն և փոխըմբռնում: Ցավով

պետք է նշել, որ շատ ծնողներ անկեղծ չեն դաստիարակների հետ: Ամոթի զգացումից ելնելով թաքցնում են երեխայի իսկական վարքագիծը տանը, գովաբանում են երեխաներին: Դաստիարակներն այնքան զգույշ պետք է լինեն զրույցների ժամանակ, որ կարողանան «որսան» չասվածը: Այդ նպատակով պետք է խոսեն նաև ընտանիքի մյուս անդամների հետ՝ ստանալով լրացուցիչ տեղեկություն երեխայի մասին: Փորձենք նկարագրել Ա.Ա-ի վարքագիծը: Նա մանկապարտեզի ավագ խմբի սան է: Աչքի է ընկնում անկարգապահությամբ և կոպտությամբ: Ծնողների հետ զրույցի ժամանակ պարզվեց, որ նրանք զարմացած են նրա վարքագծով, քանի որ, ըստ նրանց Ա.-ն շատ լսող, բարեհամբույր երեխա է: Պարզեցինք, որ նրանք թաքցրել են իսկական վարքը, որի մասին զգուշացրեց տատիկը. երեխայի համար չի եղել ոչ մի արգելք, միշտ զբաղվել է հեռախոսով կամ համակարգիչով, նեղացրել է փոքրիկ քրոջը, ոչ մեկին չի լսել: Ստանալով նման տեղեկություն՝ անհրաժեշտ է խորը վերլուծել այն և բացահայտել դաստիարակությունում եղած թերությունները և գտնել դրականին հասնելու ճիշտ ճանապարհը: Որպեսզի ընտանիքի հետ աշխատանքն ունենա հաջողություն, որոշակի արդյունք, անհրաժեշտ է մշակել այնպիսի ծրագիր, որը կօգնի բացահայտել երեխային աշխատանքում, խաղում և գործունեության մյուս տեսակներում, ընկերական միջավայրում, բակում, ծնողների հետ շփման ժամանակ: Այս ուսումնասիրությունները կօգնեն դաստիարակին ընտրել զրույցի այնպիսի թեմաներ, որոնք օգտակար կլինեն բոլորի համար: Դաստիարակը կարող է ընտրել թեմաներ ամբողջ խմբի ծնողների համար՝ առանձնացնելով նաև անհատական աշխատանք առանձին ընտանիքների հետ:

Ծնողների հետ աշխատանքում կարևորում է զրույցների դերը: Ծնողների հետ անհատական զրույցները չպետք է լինեն պատահական առավոտյան երեխային ընդունելիս կամ երեկոյան տուն ճանապարհելիս: Նման դեպքում կարող են փոխանակել մի քանի նախադասություն: Զրույցները պետք է իրականացվեն ծնողների համար հարմար ժամանակ, հանգիստ պայմաններում: Զրույցների ժամանակ պետք է ներկայացվեն նաև երեխայի կատարած աշխատանքները (նկարչություն, ծեփ, ապլիկացիա), որոնք հնարավորություն կտան ավելի լավ ճանաչելու երեխային և զրույցը կդարձնեն ավելի պարզ և հետաքրքիր: Ծնողների հետ անհատական աշխատանքը պետք է զուգահեռվի կոլեկտիվ աշխատանքի հետ: Ծնողների հետ աշխատելիս անհրաժեշտ է բացահայտել, թե երեխան տանը և մանկապարտեզում ինչպես է վերաբերվում աշխատանքին, աշխատելիս կամային որակներ դրսևորում է, թե ոչ: Կարևոր է ծնողներին բացատրել, որ եզրակացություն անելիս ելնել տարբեր երևույթներից և ոչ թե հակառակը,

սկզբում եզրակացնել, հետո արձանագրել փաստը: Օրինակ՝ ըստ ծնողի՝ իր երեխան բարևում է բոլորին, բայց պարզվեց, որ տղան բարևում է միայն մեծահասակներին: Խմբասենյակ մտնելիս շրջվում է դեպի դաստիարակը և բարևում, իսկ երեխաներին՝ ոչ:

Գլուխ 2 Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում

Երեխայի ընտանիքի անդամները նրա առաջին ուսուցիչներն են: Ընտանիքը եղել և մնում է անձի բարոյադաստիարակման հիմնական օղակն ու վճռական գործոնը:

Ընտանիքից է սկսվում բարոյական դաստիարակման նախահիմքերի կառուցումը: Երեխան, ծնվելով ընկնում է իր համար բոլորովին նոր վայր, որտեղ նրա առաջին ու հիմնական սյունը ընտանիքն է: Առաջինը տեսնում է իր ծնողներին, շփվում նրանց հետ: Ծնողների վաղ ներգործությունները, որոնք նույնիսկ կարող են չգիտակցվել երեխայի կողմից, ազդում են նրա հետագա զարգացման վրա:[1] Մինչև նախադպրոցական ծառայություն հաճախելը երեխաները շատ բան են սովորում ընտանիքում՝ սկսած բաժակով խմելուց մինչև ընթերցանություն: Ընտանիքի անդամներն են երեխաների համար կենսականորեն կարևոր որոշումներ ընդունում, շրջապատում նրանց սիրով, կրթում և դաստիարակում: Նրանք շատ լավ են ճանաչում իրենց երեխաներին և գործուն դեր ունեն նրանց դաստիարակության գործընթացում: Երեխաներն իրենց վրա կրում են ընտանիքի ազդեցությունը, ուստի դաստիարակները պետք է լրջորեն հաշվի առնեն այդ փաստը և երեխաների հետ աշխատելիս ամրապնդեն կապն ընտանիքների հետ՝ նկատի ունենալով դրանց առանձնահատկություններն ու տարբերությունները: Ընտանիքի անդամներին ընձեռվում են ուսումնական հաստատությունում իրենց երեխայի կրթադաստիարակչական աշխատանքներին մասնակցելու տարբեր հնարավորություններ: Ծնողների տրամադրվածությունն ապահովելը սկսվում է մանկավարժական կազմի հետ առաջին իսկ հանդիպումից: Հարգալից վերաբերմունքը, աշխատանքի սկզբունքների, ընթացակարգի, նպատակների և գործողությունների վերաբերյալ քննարկումները մեծապես նպաստում են ընտանիքների ներգրավմանը երեխաների ուսումնադաստիարակչական գործընթացում:

Հարկ է բացատրել հենց սկզբից, որ նրանց մասնակցությունը պարապմունքներին շատ օգտակար է թե՛ դաստիարակների, թե՛ երեխաների համար: Ընտանիքի անդամների նպատակային ներգրավումը պահանջում է ժամանակ, պլանավորում և պատկերացում ընտանիքի անդամների հետաքրքրությունների ու հնարավորությունների մասին: Ծնողներին անհրաժեշտ է նախապես ծանոթացնել կատարվելիք աշխատանքներին, իմանալ նրանց նախասիրությունները, մասնագիտական հնարավորությունները, աշխատանքային ծանրաբեռնվածությունը և այլն: Մասնակցության ձևերը ներկայացնող ցուցակի կամ հարցաթերթիկի միջոցով կարելի է պարզել, թե ինչով և ինչպես է ընտանիքը ցանկանում օգնել դաստիարակին: Ծնողների հետ աշխատանքը պետք է իրականացվի կազմակերպված, նախնական պայմանավորվածությամբ, որպեսզի այն ձևական բնույթ

[1]https://annakhachatryan25.wordpress.com/2020/05/01/%D5%A4%D5%AB%D5%BA%D5%AC%D5%B8%D5%B4%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%A1%D5%B6%D6%84/

չկրի և արդյունավետ լինի բոլոր կողմերի համար: Անհրաժեշտ է հստակ պլանավորել, թե ինչպես պետք է ընտանիքները ներգրավվեն կրթական գործընթացում: Ուսումնական հաստատության աշխատակազմի և ընտանիքների միջև համագործակցային և փոխգործուն հարաբերություններ կառուցելու համար էական նշանակություն ունեն հարգանքը և վստահությունը երեխայի և նրա ընտանիքի անդամների հանդեպ: Շատ կարևոր է ընդունել ընտանիքների անդամների բացառիկ դերը: Երբ ընտանիքի անդամը դրական մասնացություն է ունենում մանկապարտեզի կյանքին, երեխայի ինքնահարգանքը մեծանում է: Դա երեխային վստահություն է ներշնչում, որ իր ընտանիքը հավանություն է տալիս մանկապարտեզին, որտեղ ինքն անցկացնում է առանց ծնողների: Երեխայի մասին տեղեկության փոխանակումից շահում են թե ծնողը, թե՝ մանկավարժը: Ծնողները կարողանում են մանկապարտեզին աջակցել կոնկրետ նախաձեռնություններում՝ սկսած նյութականից մինչև մասնագիտական խորհրդատվությունը: Սա օգնում է ծնողներին լավ հասկանալ մանկապարտեզի ծրագիրը և ավելի խորն ըմբռնել երեխայի զարգացման հետ կապված հարցերը, ճիշտ դաստիարակել երեխային տանը: Որոշ դեպքերում առկա է լինում դաստիարակ-ծնող փոխհարաբերության աններդաշնալություն, որը ծնողին հետ է պահում երեխայի ուսուցման գործին ակտիվ մասնակցությունից: Ծնողին պարապունքների և կազմակերպչական աշխատանքներին ներգրավելու համար պետք է ստեղծագործ մոտեցում ցուցաբերել[2]:

Ծնողների հետ աշխատելու ընթացքում պետք է հաշվի առնել մի քանի կարևոր դրույթներ՝

• Ծնողներին պարապմունքների և կազմակերպչական աշխատանքների մեջ ներգրավելու համար պետք է օգտագործել բազմազան ձևեր: Լինել ստեղծագործ և ճկուն:

• Ժողովները և հանդիպումները կազմակերպել ծնողներին հարմար ժամերի:

• Թույլ տալ, որ ընտանիքն ինքը որոշի, թե ինչպես կարող է լավագույն ձևով մասնակցել գործին:

• Լինել համբերատար:

• Հենվել երեխաների և ընտանիքի ուժեղ կողմերի վրա և արձագանքել դրականորեն:

• Պահպանել գաղտնիությունը:

[2]https://annakhachatryan25.wordpress.com/2020/05/01/%D5%A4%D5%AB%D5%BA%D5%AC%D5%B8%D5%B4%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%A1%D5%B6%D6%84/

Անհատականացված ուսուցում ապահովելու համար մանկավարժը պետք է մշտական կապի մեջ լինի երեխայի ընտանիքի հետ: Նրա պարտականությունն է ընտանիքի հետ ամուր կապեր հաստատել ու պահպանել: Ծնողական ժողովների և ընտանիքի անդամների հետ այլ հանդիպումների ընթացքում դաստիարակն անպայման պետք է անդրադառնա երեխայի համակողմանի զարգացման կարևորությանը և առանձին ներկայացնի զարգացման յուրաքանչյուր ոլորտն ըստ տվյալ տարիքի երեխաների զարգացման չափորոշիչների: Երեխայի զարգացման առաջընթացի ու կարիքների վերաբերյալ քննարկումներն ու տեղեկությունների փոխանակումը օգտակար են և՛ ընտանիքի անդամների, և՛ դաստիարակների համար: Որքան ավելի սերտ և արդյունավետ լինի ուսումնական հաստատություն-ընտանիք կապը, այնքան ավելի մեծ աջակցություն կստանան երեխաները՝ ուսումնառության և դաստիարակության ընթացքն ավելի դրական և արդյունավետ կազմակերպելու առումով: Ընտանիքի անդամներին պետք է առաջարկվեն ուսումնական հաստատության կյանքին մասնակցելու տարատեսակ հնարավորություններ: Ընտանիքին հարմար ժամանակ տնային այցելություններ կազմակերպելը հնարավորութուն է տալիս դաստիարակներին ծանոթանալու երեխաներին և ընտանքիներին նրանց հարազատ միջավայրում:

Հաղորդակցություն ընտանիքների հետ

• Ուսումնական հաստատությունը երկկողմանի, բաց և մատչելի հաղորդակցություն պետք է ապահովի, որտեղ ընտանիքները և համայնքի անդամները կարևորվում են որպես ներուժ և որոշում կայացնողներ:

• Ընտանիքի անդամներին տեղեկություններ են տրամադրվում երեխաների հետ իրականացվող աշխատանքների և երեխաներից ունեցած ակնկալիքների վերաբերյալ: Ծնողներին պետք է տեղյակ պահել, թե ինչպես կարող են նրանք շարունակել աշխատանքները տանը:

• Ծնողների համար պետք է կազմակերպել ծնողական կրթության դասընթացներ՝ հիմնված ընտանքիների կարիքների և հետաքրքրությունների վրա: Դասընթացներում ներառել տեղեկություններ երեխայի տարիքային զարգացման, կարգապահության և այլ հարցերի վերաբերյալ:

• Տեղեկություններ պետք է հավաքել երեխայի և ընտանիքի մասին մինչև երեխայի նախադպրոցական ծառայություն հաճախելը և տարվա ընթացքում պարբերաբար վերանայել դրանք տնային այցելությունների, հանդիպումների, ոչ պաշտոնական զրույցների և հեռախոսազրույցների միջոցով:

• Տարեկան երկու անգամ գրավոր ներկայացնել յուրաքանչյուր երեխայի առաջընթացը և ծնողներին տեղեկություններ հաղորդել:

• Երեխայի առաջընթացի վերաբերյալ համապատասխան տեղեկություններ (օրինակ՝ երեխայի թղթապանակը, դաստիարակի նշումները) պետք է տրամադրել այն դպրոցին, ուր հաճախելու է երեխան:

Աջակցություն ընտանիքներին

• Ռեսուրսներ տրամադրել ընտանիքի անդամներին երեխայի սոցիալական, հուզական, ֆիզիկական և իմացական զարգացումն ապահովելու համար (օրինակ՝ երեխաների համար կարդալու գրքերի ցանկ, խաղերի տեսակներ, քննարկումներ):

• Նպաստել ծնողների միջև համագործակցության զարգացմանը (օրինակ՝ ամենամսյա հանդիպումներ, խաղեր մեծահասակների համար, ձեռքի աշխատանքերի ցուցադրումներ):

• Ընտանիքների համար տարբեր միջոցառումներ կազմակերպել օրվա տարբեր ժամերին, որպեսզի հնարավորինս շատ ընտանիքների անդամներ կարողանան մասնակցել:

2.1 Ընտանիքի հետ համագործակցության ձևերը

Երեխայի ընտանիքի հետ համագործակցության հիմնական ձևերն են՝

ա) Այցելություններ տուն

Մանկավարժական անձնակազմից որևէ մեկն այցելում է տուն՝ տեսնելու և ճանաչելու երեխային և նրա ընտանիքն իրենց միջավայրում:

բ) Երեխային հաստատություն բերելու և տուն տանելու ընթացքում ընկած ժամանակը

Ուսուցանող թիմը կարող է այնպես կազմել ժամատախտակը, որ երեխային հաստատություն բերելու և տուն տանելու ընթացքում եղած ժամանակը օգտագործվի ծնողների հետ ոչ պաշտոնական հաղորդակցություն ապահովելու համար:

գ) Հեռախոսային զանգեր

Կարելի է հատուկ նպատակով զանգահարել կամ ամիսը մեկ անգամ զանգահարել յուրաքանչյուր ընտանիքի՝ պարզապես կապը պահպանելու համար:

դ) Ծնողական և մանկավարժական ժողովներ

Ժողովներն այն պաշտոնական հանդիպումներն են, որոնք նպատակ ունեն քննարկելու երեխաների առաջադիմությունը, և ծնողներին հնարավորություն են տալիս

կիսելու իրենց գաղափարներն ու մտահոգությունները: Ժողովները կարող են օգտակար լինել նաև երեխայի համար անհատական պլաններ կազմելու և քննարկելու համար: Եթե ժամանակի պակասի պատճառով չի հաջողվում անմիջականորեն հաղորդակվել, կամ եթե չկա հեռախոս, ընտանիքների և մանկավարժների միջև կապը պահպանելու համար կարող են օգտագործվել գրավոր հաղորդակցման որոշ ձևեր: Գրավոր տեղեկատվություն հաղորդելիս պետք է վստահ լինեք, որ մյուս կողմը ստացել է տեղեկատվությունը: Ստորև բերված են գրավոր հաղորդակցման որոշ տեսակներ:

ե)Գրքույկներ (բրոշյուրներ)

Գրքույկները կարող են օգնել ծնողներին ծանոթանալ ծրագրին՝ ընդհանուր տեղեկատվություն տալով ծրագրի մասին, հակիրճ նկարագրելով դրա էությունն ու նպատակները:

զ) Շաբաթական գրություններ

Ամեն շաբաթ մի առանձին գրություն կարելի է ուղարկել յուրաքանչյուր ընտանիքի՝ տեղեկացնելու համար իրենց երեխայի նախընտրելի գործունեության տեսակի մասին, ինչպես նաև որևէ այլ տեղեկություն հաղորդելու համար:

է) Ոչ պաշտոնական գրություններ

Մանկավարժական կազմը կարող է երեխայի հետ տուն ուղարկել կարճ գրություններ, որպեսզի ընտանիքի անդամներին տեղեկացնի երեխայի հմտությունների ձեռքբերման կամ որևէ այլ իրականացված գործունեության մասին, ինչպես նաև շնորհակալություն հայտնի նրանց ուսումնական հաստատությանն աջակցելու համար: Ընտանիքի անդամները նույնպես կարող են մանկավարժներին գրություններ ուղարկել՝ իրենց երախտագիտությունը հայտնելու կամ որևէ խնդրանք հաղորդելու համար:

ը) Անհատական գրառումների գրքույկներ

Գրառումների գրքույկները կարող են ամեն օր տնից հաստատություն և հակառակ ուղղությամբ ուղարկվել՝ ընթացիկ տեղեկատվությունը միմյանց հաղորդելու նպատակով: Ընտանիքները կարող են նախազգուշացնել մանկավարժներին հատուկ իրադարձությունների, օրինակ՝ ծննդյան տոների, նոր աշխատանքի հնարավորության, ճանապարհորդությունների, այցելությունների մասին:

թ) Պատի տեղեկատվական թերթեր

Պատի տեղեկատվական թերթը կարող է օգտակար լինել ընտանիքներին՝ միշտ թարմ տեղեկատվություն հաղորդելով նրանց ժողովների ու հատուկ իրադարձությունների, ամենօրյա պարապմունքների բաշխման ցանկի, ընտանիքների

համար նախատեսված միջոցառումների, ինչպես նաև ընդհանուր առմամբ ուսումնական հաստատության անցուդարձի մասին:

ժ) Առաջարկությունների տուփեր

Ծնողներին առաջարկվում է իրենց մտքերը, մտահոգությունները, առաջարկություններն ու հարցերը գրավոր ներկայացնել մանկավարժական կոլեկտիվի անդամներին՝ դնելով ժրանք հատուկ տուփի մեջ, որը տեղադրվում է նկատելի տեղում:

Դաստիարակի աշխատանքն ընտանիքի հետ ամենադժվարն է, բայց ամենաանհրաժեշտը: Այս աշխատանքը երեխայի նկատմամբ անհատական մոտեցման անբաժան գործն է, յուրահատուկ օգնություն, միաժամանակ ոչ ցանկալի որակների կանխում, հոգատարություն նրա կյանքի նկատմամբ: Կազմակերպելով ծնողների հետ աշխատանք՝ դաստիարակն առաջին հերթին ուշադրություն է դարձնում ոչ լիարժեք ընտանիքներին, փորձում օգնել ծնողներին: Աշխատանքի ձևերը շատ տարբեր են, բայց առաջնայինը մնում է անհատականը: Փորձված դաստիարակներն առանձնացնում են կոնկրետ հարցեր ծնողների հետ աշխատելիս: Միասնական դաստիարակչական աշխատանքի համար մշակում են ծրագիր: Նրանց պարտականությունները շատ են և բազմազան: Հաշվառումների մեջ պետք է նշեն երեխաների վարքագիծը գործունեության տարբեր տեսակներում, բնավորության գծերը և մտածեն երեխայի հետ աշխատանքի տարբեր ձևերի մասին:

2.2 Ծնողները խմբասենյակում

Ծնողները խմբասենյակում կարող են տարբեր դերեր ունենալ: Նրանք կարող են կատարել բազմաթիվ պաշտոնական և ոչ պաշտոնական պարտականություններ: Ստորև ներկայացված են այդ պարտականություններից մի քանիսը, որոնք դաստիարակը կարող է ներկայացնել ծնողներին, որպեսզի նրանք ընտրելու հնարավորություն ունենան:

ա) Այցելուներ

Ծնողներին պետք է խրախուսել մտնել խմբասենյակ, որտեղ նրանք կարող են դիտել ու խաղալ իրենց երեխաների հետ:

բ) Կամավորներ

Ծնողների հմտություններն ու գիտելիքները կարելի է օգտագործել խմբասենյակում երեխաների հետ զբաղվելու ժամանակ: Նրանք կարող են օգնել մանկավարժներին որոշակի գործունեության ժամանակ, նրանց հետ միասին կատարել որոշ աշխատանքներ, օգնել խմբասենյակը դասավորելիս և ձևավորելիս: Որոշ ծնողներ կարող են օգնել՝

էքսկուրսիաների համար փոխադրամիջոցներ կամ խմբասենյակի համար նյութեր տրամադրելով:

Ուսումնական ծրագրով նախատեսված են որոշակի գործունեության տեսակներ՝ ուղղված ծնողներին

- ✓ Ծնողների կողմից միմյանց աջակցելու փորձեր

Կարելի է փորձառու և սկսնակ ծնողների հանդիպումներ կազմակերպել՝ նպատակ ունենալով օգնել նրանց կողմնորոշմանը կամ պարզապես շփվելու հնարավորություն ստեղծել:

- ✓ Տեղեկատվություն ծնողների համար

Ծնողներին կարելի է տեղեկատվություն տրամադրել ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող թեմաների շուրջ, օրինակ՝ երեխայի զարգացման, ընթերցանության, կարգապահության վերաբերյալ: Այդպիսի գործունեությունը կարող է կազմակերպվել և՛ դաստիարակների, և՛ ծնողների կողմից:

- ✓ Միջոցառումներ ծնողների և դաստիարակների համար

Որոշ միջոցառումներ կարելի է պլանավորել բացառապես հասարակական նպատակներով, օրինակ՝ քաջալերել ծնողներին և դաստիարակներին ժամանակ տրամադրել հանգստի, միմյանց հետ ծանոթանալու և շփվելու համար:

- ✓ Գրադարաններ

Ծրագրի շրջանակներում կարող է կազմակերպվել հետաքրքիր գրքերի, հոդվածների, բրոշյուրների, տեսաժապավենների և ձայներիզների հավաքագրում, որոնք ծնողները կարող են որոշ ժամանակով վերցնել և օգտագործել: Համոզվե՛ք, որ ընտանիքները գիտակցում են, որ իրենց մասնակցությունը խմբասենյակում և ներգրավումը տարբեր աշխատանքներում ողջունելի է և բարձր է գնահատվում: Հենց սկզբից քննարկեք, թե ինչպես պետք է պահպանեք կապը միմյանց հետ: Ծնողների ներգրավումը կարող է նորություն լինել ձեր մանկավարժական կոլեկտիվի և ընտանիքների համար, ուստի պետք է նկատի ունենալ, որ նոր հարաբերությունների հաստատումը ժամանակ է պահանջում: Ծնողների ներգրավումը կարող է կատարվել աստիճանաբար՝ որոշակի ժամանակի ընթացքում:

Ընտանիքների ներգրավումը խրախուսելու համար, պետք է

• Պահպանել սերտ կապ: Համոզվել, որ մանկավարժական կոլեկտիվի անդամն առնվազն շաբաթը մեկ անգամ զրուցում է յուրաքանչյուր երեխայի ծնողների հետ:

• Փորձել ներգրավել ողջ ընտանիքին:

Երբեմն հայրերը դուրս են մնում երեխաների համար իրականացվող ծրագրերից: Ստեղծագործաբար տարբերակներ որոնեք հայրերին, եղբայրներին, քույրերին և ընտանիքի մյուս անդամներին ներգրավելու համար:

Բացի վերոհիշյալից, ընտանիքի հետ համագործակցությունը կարող է իրականացվել նաև այլ պաշտոնական ձևերով, ինչպիսիք են՝ կլոր սեղանները, տարբեր թեմատիկ քննարկումները, ծնողների համար բաց դիտումների կազմակերպումը, խորհրդատվական հանդիպումները, բաց դռների օրերը, ցուցահանդեսները, անհատական զրույցները, ծնողական կրթությունը և այլն:

Գործնական մաս

2.3 «Աշնան տոնը մանկապարտեզում»

Մանկապարտեզում կազմակերպվող յուրաքանչյուր տոնի, միջոցառման, ծեսի կազմակերպման ժամանակ ևս կարևորվում է ծնողների հետ համագործակցությունը:

Աշնանը ծնողների հետ միասին կազմակերպել էինք աշնանային ցերեկույթ: Նախապես ծնողների հետ զարդարել էինք դահլիճը մանկապարտեզի բակը: Ծնողները զամբյուղների մեջ բերել էին բանջարեղեն: Դահլիճը վերածվել էր աշնանային ոսկեզօծ այգու՝ ծածկված գույնզգույն տերևներով և տարատեսակ մրգերով:

Նկար 1

Երեխաները արտասանեցին ոտանավորներ, նրանց աշխույժ երգն ու պարը կրկնակի դարձրեցին աշնան գեղեցիկ տոնը:

Մասնակցելով կազմակերպչական աշխատանքներին, ծնողների մոտ ի հայտ է գալիս ոգևորվածություն, համախմբվածություն, մշտական շփում մանկապարտեզի անձնակազմի հետ:

Մանկապարտեզ-ծնող կապի ամրապնդման համար կարևորվում է մեր համատեղ աշխատանքը, որը շատ մեծ դեր ունի սաների գիտելիքների ամրապնդման ու խորացման գործում:

Տնօրենի վերլուծությունը աշխատանքի վերաբերյալ

- ✓ Հետազոտության ընթացքում դաստիարակը մանրակրկիտ ուսումնասիրել է մանկապարտեզ-ծնող համագործակցությունը, անդրադարձել հիմնական ձևերին և հասել իր հիմնական նպատակներին: Մանկապարտեզ-ծնող համագործակցությունը ուղղված է սաների գիտելիքների ամրապնդմանն ու զարգացմանը, նրանց դաստիարակությանը:
- ✓ Հետազոտվող թեման կարևոր է նախադպրոցական կրթության մեջ, քանի որ երեխայի ճիշտ զարգացումը սկսվում է հենց նախադպրոցական տարիքից, և միայն մանկապարտեզ-ծնող համագործակցության դեպքում կունենանք դրական արդյունք, դաստիարակել մարդկության համար լավ արժեքներով և բազմակողմանի զարգացած մարդ:

Մեթոդիստի վերլուծությունը աշխատանքի վերաբերյալ

- ✓ Դաստիարակը, անշուշտ հասել է իր նպատակներին, օգտագործելով տարբեր աշխատանքային ձևեր (անհատական աշխատանք ծնողի հետ, խմբային ծնողական ժողովներ, այցելություններ ընտանիք): Զարգացնել ծնող-դաստիարակ հարաբերությունը, հիմնականում ուղղված էին երեխաների ճիշտ դաստիարակմանը:
- ✓ Այո, հետազոտվող թեման մեծ կարևորություն ունի նախադպրոցական կրթության մեջ, այն հիմնականում օգնում է երեխաների ճիշտ դաստիարակության գործին: Շատ ընտանիքներում դրանք թերի են, պետք է դաստիարակը իր մանկավարժական տարբեր մեթոդներով ծնողներին տեղյակ պահի մանկապարտեզում կատարվող իրադարձությունները, աշխատանքը, հարկ եղած դեպքում օգնությունը, մասնակից դարձնի մանկավարժական նիստերին, մեթոդ-

ժամերին, հաճախակի կազմակերպվող ծնող-կոմիտեի նիստերը, որոնք նպաստում են ճիշտ ձևով կազմակերպելու երեխաների դաստիարակությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, հետազոտության արդյունքում ուսումնասիրելով մանկավարժական աշխատողի և սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ համագործակցությունը, եկանք մի շարք եզրահանգումների՝

- ✓ երեխաների նկատմամբ անհատական մոտեցում դրսևորելու կարևոր պայմաններից մեկը ընտանիքի և մանկապարտեզի միջև կապն է: Դրա

իրականացումը պահանջում է խոր գիտելիքներ, հաղորդակցական կարողություններ, հմտություններ և այլն,

- ✓ Ինչպես ծնողների կոլեկտիվի, այնպես էլ առանձին ծնողների հետ աշխատանքը կունենա արդյունք, եթե լավ ենք տիրապետում ընտանեկան դաստիարակության առանձնահատկություններին,
- ✓ Դրական արդյունք կստանանք այն ժամանակ, երբ ծնողների և դաստիարակների միջև կա համատեղ աշխատանք և միասնական պահանջ երեխաների նկատմամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ք. Վիրաբյան-Մանկապարտեզի և ընտանիքի կապը որպես անհատական մոտեցման արդյունավետ իրականացման պայման, հանրապետական ուսանողական գիտաժողովի նյութեր, ՎՊՀ
2. Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա.Ս.,- Մանկավարժություն, Երևան, 2005, 455 էջ
3. 3-6 տարեկան երեխաների կրթական ծառայությունների կազմակերպումն այլընտրանքային մոդելներով, դաստիրակի ուղեցույց, Երևան, 2018թ.,197 էջ